

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Ստուգաթերթ N 6

Մասնագիտացված բժշկական օգնություն

Գործառույթներ՝ Տեխնիկական ծառայություններ

_____ (տեսչության տարածքային մարմնի անվանումը)	_____ (հասցեն)	_____ (հեռախոսահամարը)
_____ (ստուգող անձի պաշտոնը)	_____ (ազգանունը, անունը, հայրանունը)	
_____ (ստուգող անձի պաշտոնը)	_____ (ազգանունը, անունը, հայրանունը)	
_____ (ստուգող անձի պաշտոնը)	_____ (ազգանունը, անունը, հայրանունը)	

ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _____ ավարտը՝ _____

_____ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)	_____ (ՀՎՀՀ-ն)
_____ (տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)	_____ (հեռախոսահամարը)
_____ (տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը)	_____ (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ _____

N	Հարց	այո	ոչ	չ/պ	Կշիռ	հղում նորմատիվ ակտին	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1	Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարի բաժանմունքները կամ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքը՝							
1.1	Ապահովված է անհրաժեշտ փափուկ գույքով, այդ թվում՝ սպիտակեղենով:				2	Հղում 1, կետ 48	տեսողական	
1.2	Անկողնային սպիտակեղենը փոխվում է ըստ անհրաժեշտության:				2	Հղում 1, կետ 48	տեսողական	
1.3	մաքուր սպիտակեղենը պահվում է այդ նպատակով հատկացված սենքերում:				2	Հղում 1, կետ 53	տեսողական	
1.4	Հերթապահ բուժքույրերի հերթապահ կետերին կից հատկացված պահարաններում պահվում է սպիտակեղենի անհրաժեշտ օրական քանակությունը:				1	Հղում 1, կետ 53	տեսողական	
1.5	Օգտագործված սպիտակեղենը պահում են բաժանմունքի սենքում՝ կափարիչով տարողություններում պիտակավորված պոլիէթիլենային պարկերում,				1	Հղում 1, կետ 54	տեսողական	
1.6	Օգտագործված սպիտակեղենը պահում են կարճ ժամանակահատված(1 օրից ոչ ավել)				2	Հղում 1, կետ 54	տեսողական	
1.7	Արտաթորանքներով, կենսաբանական հեղուկներով կեղտոտված սպիտակեղենը անմիջապես տեղավորվում է պարկերի մեջ և ուղարկվում հիվանդանոցի լվացքատուն, որտեղ նախքան լվացումն այն փխտահանվում է:				3	Հղում 1, կետ 54	տեսողական	
1.8	Օգտագործված սպիտակեղենն իր մեջ չի պարունակում սրածայր իրեր, վիրաբուժական գործիքներ, կենսաբանական հյուսվածքներ:				2	Հղում 1, կետ 55	տեսողական	
1.9	Լվացված սպիտակեղենը բաժանմունք են տեղափոխում այդ նպատակով հատկացված փոխադրամիջոցով:				2	Հղում 1, կետ 56	տեսողական	
1.10	Լվացված սպիտակեղենը բաժանմունք են տեղափոխում շրջակա միջավայրից աղտոտումը բացառող պիտակավորված տարողություններով կամ պարկերով:				2	Հղում 1, կետ 56	տեսողական	
2.	Ծննդաբերական բաժնում՝							

2.1	Օգտագործված սպիտակեղենի հավաքվում է մոմլաթե պարկում:				2	Հղում 1, կետ 120.	տեսողական	
2.2	Օգտագործված սպիտակեղենի հավաքման մոմլաթե պարկը տեղադրված է բաքում:				1	Հղում 1, կետ 120	տեսողական	
2.3	Օգտագործված սպիտակեղենի հավաքման բաքը պիտակավորված է:				1	Հղում 1, կետ 120	տեսողական	
3.	Անկողնային սպիտակեղենի փոխումն իրականացվում է սենյակների խոնավ մաքրումից առաջ:				1	Հղում 1, կետ 126.	տեսողական	
4.	Բուժաշխատողը օգտագործված սպիտակեղենն անմիջապես անկողնու մոտ հավաքում է պոլիէթիլենային կամ մոմլաթե պարկում և փակում:				2	Հղում 1, կետ 127.	տեսողական	
5.	Այդ ընթացքում բուժաշխատողը կրում է պաշտպանիչ արտահագուստ՝ ձեռնոց, գոգնոց:				1	Հղում 1, կետ 127.	տեսողական	
6.	Հակատուբերկուլոզային հիվանդանոցում.							
6.1	մաքրման գույքը (դույլեր, կոնքեր) պիտակավորվում է և օգտագործվում ըստ նշանակության, հետո՝ ախտահանվում				2	Հղում 2, կետ 205.	տեսողական	
6.2	հիվանդին դուրս գրելուց հետո անկողնային սպիտակեղենը հավաքվում է հատուկ պարկի մեջ՝ ախտահանման և լվանալու համար:				1	Հղում 2, կետ 218	տեսողական	
6.3	հիվանդասենյակները և միջանցքները մաքրելու համար նախատեսված մակնշված մաքրման գույքը (դույլ, լաթ, սպունգ) ախտահանում են առանձին:				2	Հղում 2, Հավելված 4, կետ 4.	տեսողական	
6.4	կեղտոտ սպիտակեղենն ամեն օր հավաքվում է կափարիչով բաքի կամ դույլի մեջ:				1	Հղում 2, Հավելված 4, կետ 7.	տեսողական	
6.5	ամեն օր կափարիչով բաքի կամ դույլի մեջ հավաքվող կեղտոտ սպիտակեղենը տեղափոխվում են արտաձիգ օդափոխություն ունեցող սենյակ, ախտահանվում ախտահանիչ լուծույթով:				1	Հղում 2, Հավելված 4, կետ 7.	տեսողական	
6.6	սպիտակեղենի պահման սենյակում այն տեսակավորվում և ուղարկվում է լվացքատուն:				1	Հղում 2, Հավելված 4, կետ 7.	տեսողական	
6.7	սպիտակեղենի պահման սենյակից սպիտակեղենը լվացքատուն ուղարկելուց հետո սենյակը մաքրվում է և ախտահանվում ախտահանիչ լուծույթով:				2	Հղում 2, Հավելված 4, կետ 7.	տեսողական	
6.8	Կեղտոտ և մաքուր սպիտակեղենի տեղափոխումը կատարվում է առանձին:				2	Հղում 2, Հավելված 4, կետ 7.	տեսողական	
6.9	Կեղտոտ սպիտակեղենի տեղափոխման համար փոխադրամիջոցի առկայության դեպքում այն ախտահանվում				2	Հղում 2, Հավելված 4, կետ 7.	տեսողական	

	է հիվանդանոցի ախտահանողի կամ վարակիչ բաժանմունքի հերթապահ մայրապետի կողմից,						
6.10	Փոխադրամիջոցի ախտահանման մասին կատարվում է գրանցում համապատասխան մատյանում:			1	Հղում 2, Հավելված 4, կետ 7	տեսողական	
7.	Բուժ.կանխարգելիչ հիմնարկում հասարակական զուգարանի /այսուհետ՝ զուգարան/ առկայության դեպքում ապահովված է՝						
7.1	Ձուգարանի վացարանին կից դրված է հեղուկ օճառ.			2	Հղում 3, կետ 26	տեսողական	
7.2	Ձուգարանում դրված է զուգարանի թուղթ:			2	Հղում 3, կետ 26	տեսողական	
7.3	Ձուգարանում ապահովված են ձեռքերի չորացման համար էլեկտրական սարքերով կամ թղթյա միանվագ օգտագործման սրբիչներով			2	Հղում 3, կետ 26	տեսողական	
7.4	Ձուգարանի խցիկներում կան աղբանոթներ:			1	Հղում 3, կետ 36	տեսողական	
7.5	Կենցաղային աղբի կուտակման աղբարկղները /աղբանոթները/ կափարիչի ոտնակային հարմարանքով են:			1	Հղում 3, կետ 36	տեսողական	
7.6	Կենցաղային աղբը կուտակում են աղբարկղներում տեղադրված պլիլեթիլենային տոպրակներում:			2	Հղում 3, կետ 36	տեսողական	
7.7	Ձուգարանի սենքերը և սարքավորումները պահվում են մաքուր վիճակում: Սենքերի պատերին, հատակին և սարքավորումների մակերեսներին չկան տեսանելի աղտոտվածության հետքեր կամ հատակի մակերեսին ջրակուտակումներ, խոնավություն:			3	Հղում 3, Կետ 31, 33	Տեսողական, հարցում	
7.8	Իրականացվում է զուգարանի ամենօրյա մաքրում՝ առնվազն 2 անգամ և ըստ անհրաժեշտության:			2	Հղում 3, Կետ 34	Տեսողական, հարցում	
7.9	Սանիտարական մաքրումը կատարվում է խոնավ եղանակով:			2	Հղում 3, Կետ 34	Տեսողական հարցում	
7.10	Սանիտարական սարքավորումների, վացարանների, հատակի, պատերի ախտահանման աշխատանքները կատարվում են սահմանված կարգով: Նշում 1			1	Հղում 3, Կետ 25, 31, 33, 34	Տեսողական հարցում	
7.11	Մաքրման պարագաները ախտահանում են աշխատանքային օրվա վերջում՝ նատրիումի հիպոքլորիդի (0.5%), քլորամին Բ-ի (1%) կամ Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով թույլատրված համարժեք այլ լուծույթների մեջ 1 ժամ ընկղմելով, որից հետո՝ պարզաջրելով:			2	Հղում 3, Կետ 32	Տեսողական հարցում	
7.12	Ձուգարանի սենքերի հիմնական մաքրումը կատարվում է շաբաթը մեկ անգամ՝ ախտահանիչ նյութերի օգտագործմամբ (6%-անոց ջրածնի գերօքսիդի և 0.5%-անոց վլացոդ նյութի խառնուրդով):			2	Հղում 3, կետ 35	Տեսողական հարցում	
7.13	Հիմնական մաքրումը ընդգրկում է սենքերի պատերը, հատակը, առաստաղը, պատուհանները, դռները, աղբարկղները և սարքավորումները:			2	Հղում 3, կետ 35	Տեսողական հարցում	

8.	Վտանգավոր բժշկական թափոնների գործածությունը կարգավորելու և դրա հետ կապված մարդու առողջության անվտանգության պահանջները ապահովելու նպատակով կազմակերպության տնօրենը ընդունել է բժշկական թափոնների անվտանգ գործածությունը կարգավորող գործողությունների իրավական ակտ:				3	Հղում 4, կետ 12	փաստաթղթային	
9.	Կազմակերպության տնօրենի կողմից նշանակված է թափոնների կառավարման պատասխանատու անձ կամ հանձնաժողով և սահմանված են պարտականությունները:				3	Հղում 4, կետ 16	փաստաթղթային	
10.	Կազմակերպության տնօրենը տրամադրում է բժշկական թափոնների գործածությունը կարգավորող գործողությունների Ակտը համապատասխան աշխատողներին և կազմակերպում է դրան վերաբերող դասընթացները:				2	Հղում 4, կետ 15	փաստաթղթային	
11.	Ակտով կարգավորվում են վարակիչ թափոնների գործածության համար պատասխանատու աշխատողների աշխատանքային պարտականությունները:				2	Հղում 4, կետ 13	փաստաթղթային	
12.	Կազմակերպության այն աշխատողները, որոնց աշխատանքային պարտականությունները առնչվում են վարակիչ թափոնների գործածության հետ, մինչև իրենց աշխատանքային պարտականություններին անցնելը պարտադիր անցնում են բժշկական թափոնների անվտանգ գործածության պահանջների ուսուցում, ինչպես նաև ծանոթանում են Ակտի պահանջներին:				2	Հղում 4, կետ 14	փաստաթղթային	
13.	Ակտով կարգավորվում են վարակիչ թափոնների ըստ տեսակի առանձնացման, տարողությունների և բեռնարկղների մեջ տեղադրման, մեկուսացման իրականացումը նկարագրող ընթացակարգերը:				2	Հղում 4, կետ 15	փաստաթղթային	
14.	Ակտով կարգավորվում են վարակիչ թափոնների տեղափոխման և ընդունման, վնասագերծման և վարակագերծման փուլերի իրականացումը նկարագրող ընթացակարգերը:				2	Հղում 4, կետ 15	փաստաթղթային	
15.	Ակտում ներառված է վարակիչ թափոնների շարժի պատկերը արտացոլող շարժի աղյուսակը:				1	Հղում 4, կետ 13, ուղեցույց, կետ 8	փաստաթղթային	
16.	Ակտում ներառված է վարակիչ թափոնի քանակների /գոյացման հաշվարկ/, ծավալների նախնական և պարբերական գնահատման, քանակների, ծավալի				1	Հղում 4, կետ 13, ուղեցույց, կետ 4	փաստաթղթային	

	նվազեցման հնարավոր տարբերակների ծրագիր:						
17.	Համապատասխան տեղերում տեղադրված են պատահարների դեպքում վարակիչ թափոնների թափվածքը մաքրելու համար հատուկ հավաքածուներ:				2	Հղում 4, ուղեցույց, կետ 45	Տեսողական հարցում
18.	Ակտով կարգավորվում են քիմիական և դեղագործական թափոնների ըստ տեսակի առանձնացման, տարողությունների և բեռնարկղների մեջ տեղադրման, մեկուսացման, իրականացումը նկարագրող ընթացակարգերը:				2	Հղում 4, կետ 13, ուղեցույց, կետ 8	փաստաթղթային
19.	Ակտով կարգավորվում են քիմիական և դեղագործական թափոնների տեղափոխման և ընդունման, վնասագերծման իրականացումը նկարագրող ընթացակարգերը:				2	Հղում 4, կետ 13, ուղեցույց, կետ 8	
20.	Ակտում ներառված է քիմիական և դեղագործական թափոնների շարժի պատկերը արտացոլող շարժի աղյուսակը:				2	Հղում 4, կետ 13, ուղեցույց, կետ 8	փաստաթղթային
21.	Համապատասխան տեղերում տեղադրված են պատահարների դեպքում քիմիական /սնդիկ և այլն/ թափոնների թափվածքը մաքրելու համար հատուկ հավաքածուներ:				2	Հղում 4, ուղեցույց, կետ 45	փաստաթղթային
22.	Ակտում ներառված է քիմիական և դեղագործական թափոնների քանակների, ծավալների նախնական և պարբերական գնահատման, քանակների, ծավալի նվազեցման հնարավոր տարբերակների ծրագիր:				2	Հղում 4, կետ 13, ուղեցույց, կետ 4	Տեսողական հարցում
23.	Ակտով կարգավորվում են քիմիական և դեղագործական թափոնների գործածության համար պատասխանատու աշխատողների աշխատանքային պարտականությունները:				2	Հղում 4, կետ 13	փաստաթղթային
24.	Կազմակերպության այն աշխատողները, որոնց աշխատանքային պարտականությունները առնչվում են քիմիական և դեղագործական թափոնների գործածության հետ, մինչև իրենց աշխատանքային պարտականություններին անցնելը պարտադիր անցել են բժշկական թափոնների անվտանգ գործածության պահանջների ուսուցում, ինչպես նաև ծանոթացել են Ակտի պահանջներին:				2	Հղում 4, կետ 14	փաստաթղթային
25.	Ակտում ներառված է ուսուցանումների (կրթական և տեղեկատվական, նոր սարքավորումների, ընթացակարգերի և տեխնոլոգիաների, անվտանգության կանոնների վերաբերյալ ուսուցումներ) ապահովման ծրագրեր:				2	Հղում 4, կետ 13, ուղեցույց, կետ 45	փաստաթղթային

26.	Ակտում ներառված է անկանխատեսելի դեպքերի, դժբախտ պատահարի և աշխատանքի անվտանգության ծրագիր:				2	Հղում 4, կետ 13, ուղեցույց, կետ 45	փաստաթղթային	
27.	Առկա են հաշվարկներ բժշկական թափոնների գործածության համար պահանջվող նյութական պաշարի՝ տարողությունների, բեռնարկղերի և հավաքման սայլակների արժեքի, քանակի և մարդկային ներուժի վերաբերյալ:				1	Հղում 4, կետ 13, ուղեցույց, կետ 4	փաստաթղթային	
28.	Աշխատանքի անվտանգության ապահովման համար տրամադրված է համապատասխան անձնական պաշտպանական հանդերձանք:				2	Հղում 4, կետ 13, ուղեցույց, կետ 44, 45	փաստաթղթային	
29.	Բժշկական թափոնները հավաքվում (տարանջատվում) և պահվում են առանձին՝ ըստ տեսակների՝ բացառելով դրանց միմյանց խառնվելը				2	Հղում 4, կետ 18	Տեսողական հարցում	
30.	Բժշկական թափոնները՝ բացառությամբ վարակիչ միկրոկենսաբանական թափոնների և միկրոկենսաբանական հեղուկների, դրանց գոյացման վայրում					Հղում 4, կետ 19	Տեսողական հարցում	
30.1	անմիջապես առանձնացվում և տեղադրվում են դրանց հավաքման համար հատուկ տեղադրված տարողությունների մեջ:				1			
30.2	տարողությունները կրում են «բժշկական վտանգավոր թափոններ» մակնշումը:				1			
31.	Վարակիչ միկրոկենսաբանական թափոնները դրանց գոյացման վայրում					Հղում 4, կետ 20	Տեսողական հարցում	
31.1	անմիջապես առանձնացվում են այլ բժշկական թափոններից, տեղադրվում են դրանց հավաքման համար հատուկ տեղադրված տարողությունների մեջ,				1			
31.2	տարողություններ կրում են կենսաբանական վտանգի նշանը և «Վարակիչ թափոն» մակնշումը, որոնց գույնը հակադրվում է կենսաբանական վտանգի նշանի և «Վարակիչ թափոն» մակնիշը կրող բառերի գույնին:				1			
32.	Սրածայր թափոնները, դրանց գոյացման վայրում					Հղում 4, կետ 21	Տեսողական հարցում	

32.1	օգտագործելուց անմիջապես հետո տեղադրվում են մեկանգամյա օգտագործման կարծր (օրինակ՝ պլաստիկ շշերի, մետաղյա կամ կարծր պլաստմասսե բեռնարկղի մեջ)				1		
32.2	տարողությունները կրում են կենսաբանական վտանգի նշանը և «Ջգույշ սրածայրեր» մակնշումը				1		
33.	Տեղադրելուց առաջ ներարկիչների ասեղները կրկնակի չեն փակում կափարիչով և (կամ) ախտահանում:				3	Հղում 4, կետ 21	Տեսողական հարցում
34.	Կանխարգելիչ կամ զանգվածային պատվաստումներ կատարելիս օգտագործում են հատուկ միանվագ ինքնառչնչացվող ներարկիչներ:				2	Հղում 4, կետ 21	Տեսողական հարցում
35.	Կենսաբանական հեղուկները					Հղում 4, կետ 22 Հղում 5, կետ 38	Տեսողական հարցում
35.1	տեղադրում են կարծր, կափարիչ ունեցող, դիմացկուն, արտահոսք չունեցող մեկանգամյա կամ բազմակի օգտագործման հատուկ դրանց հավաքման համար տեղադրված, կենսաբանական վտանգի նշանը և «Վարակիչ թափոն» մակնշումը կրող տարողությունների մեջ (շշեր, սրվակներ, պլաստիկ տարողություններ և այլն),				2		
35.2	ախտահանում են և լցնում կոյուղի:				1		
36.	Տարողությունների գույնը հակադրվում է հրամանի հավելված 2-ով հաստատված կենսաբանական վտանգի նշանի և 'Վարակիչ թափոն' մակնշումը կրող բառերի գույնին:				1	Հղում 4, կետ 22	Տեսողական հարցում
37.	Ախտաբանաանատոմիական թափոնները տեղադրվում են կարծր, կափարիչ ունեցող, դիմացկուն, արտահոսք չունեցող մեկանգամյա կամ բազմակի օգտագործման հատուկ դրանց հավաքման համար տեղադրված տարողություն-ների մեջ:				3	Հղում 4, կետ 23,	Տեսողական հարցում
38.	Ախտաբանաանատոմիական թափոնները տարողություն-ների գույնը հակադրվում է հրամանի հավելված 2-ով կենսաբանական վտանգի նշանի և 'Վարակիչ թափոն' մակնշումը կրող բառերի գույնին:				1	Հղում 4, կետ 23	Տեսողական հարցում
39.	Բժշկական թափոնները՝ բացառությամբ սրածայր թափոնների և կենսաբանական հեղուկների, դրանց գոյացման տեղում տեղադրվում են դիմացկուն, անթափանց, կողքերից և հատակից արտահոսք չունեցող մեկանգամյա				3	Հղում 4, կետ 24	Տեսողական հարցում

	օգտագործման պոլիէթիլենային տոպրակներում և (կամ) մեկանգամյա կամ բազմակի օգտագործման կարծր տարողությունների մեջ:						
40.	Բոլոր տեսակի բժշկական թափոնները տարողությունների մեջ տեղադրվելուց հետո հերմետիկորեն փակվում են:				2	Հղում 4, կետ 25	Տեսողական հարցում
41.	Ախտաբանաանատոմիական, միկրոկենսաբանական, սրածայր և քիմիական թափոնները նաև կնքվում, ինչից հետո բժշկական թափոնի հավաքելու, տեղադրելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողը լրացնում է պիտակ՝ դրա վրա նշելով տեղադրված բժշկական թափոնի տեսակը, դրա տարողությունում տեղավորելու կոնկրետ ժամը, օրը, ամիսը, տարեթիվը, իր անունը և ազգանունը, ինչպես նաև կազմակերպության անվանումը:				2	Հղում 4, կետ 25	Տեսողական
42.	Լրացված պիտակը ամրացված է տարողությանը, որն անմիջապես տեղափոխվում է բժշկական թափոնների ժամանակավոր պահման հատուկ տարածք:				2	Հղում 4, կետ 25	Տեսողական
43.	Փակված տարողությունները բացվում են միայն բժշկական թափոնների վնասագերծման նպատակով:				2	Հղում 4, կետ 26	Տեսողական
44.	Եթե փակված տարողությունը որևէ կերպ վնասվել է, ապա այն տեղադրվում է ավելի մեծ տարողության կամ բեռնարկղի մեջ և փակվում չվնասելով սկզբնական կնիքը:				3	Հղում 4, կետ 26	Տեսողական
45.	Բժշկական թափոնների կուտակման պարկերը և բեռնարկղերը ունեն գունային կոդավորում՝ դրանք տեսանելիորեն ճանաչելու և տարանջատումը հեշտացնելու համար:				2	Հղում 4, կետ 27	Տեսողական
46.	Տարողությունների վնասվելու հետևանքով բժշկական թափոնների արտահոսքի դեպքում թափոնների հետ շփում ունեցած բոլոր մակերեսները ախտահանվում են:				2	Հղում 4, կետ 28	Տեսողական
47.	Բազմակի օգտագործման տարողությունները ախտահանվում են յուրաքանչյուր բեռնաթափումից հետո:				2	Հղում 4, կետ 29	Տեսողական հարցում
48.	Աղբատար խողովակները չեն օգտագործում բժշկական թափոնների (այդ թվում տարողությունների մեջ տեղադրված)				3	Հղում 4, կետ 30	Տեսողական հարցում

	տեղափոխման համար:							
49.	Կազմակերպությունում տարողության մեջ տեղադրված բժշկական թափոնների տեղափոխման համար օգտագործում են բազմակի օգտագործման բեռնարկղներ կամ անիվավոր կցասայլեր:				1	Հղում 4, կետ 31	Տեսողական հարցում	
50.	Տարողությունների մեջ տեղադրված բժշկական թափոնների տեղափոխման համար բազմակի օգտագործման բեռնարկղները կամ անիվավոր կցասայլերը ամուր փակվում են:				1	Հղում 4, կետ 32	Տեսողական հարցում	
51.	Կցասայլերը մաքրվում, պարբերաբար (առնվազն շաբաթը մեկ անգամ) ախտահանվում են:				1	Հղում 4, կետ 32	Տեսողական հարցում	
52.	Կցասայլերը օգտագործվում են բացառապես բժշկական թափոնների տեղափոխման համար:				1	Հղում 4, կետ 32	Տեսողական հարցում	
53.	Կազմակերպությունը ունի բժշկական թափոնի ժամանակավոր պահման հատուկ տարածք:				2	Հղում 4, կետ 33, 34	Տեսողական	
54.	Բժշկական թափոնի ժամանակավոր պահման հատուկ տարածքը					Հղում 4, կետ	Տեսողական	
54.1	պաշտպանված է մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն.				2			
54.2	մշտապես մաքրվում է և զերծ է թափված աղբից, չունենա ջրականգներից.				2			
54.3	ախտահանվում է պարբերաբար՝ առնվազն շաբաթը մեկ անգամ, ինչպես նաև արտահոսքի յուրաքանչյուր դեպքում.				2			
54.4	բացառվում է կենդանիների, այդ թվում միջատների և կրծողների, շփումը բժշկական թափոնների հետ, ինչը ապահովելու համար պարբերաբար իրականացվում է միջատասպան (դեզինսեկցիա) և կրծողասպան (դեռատիզացիա) միջոցառումներ.				2			
54.5	բացառվում է կողմնակի անձանց մուտքը.				2			

54.6	ապահովված է ջրի ծորակով և ջրահեռացման գծով,				2			
54.7	պատերն ու առաստաղն ունեն անջրաթափանց ծածկույթ,				2			
54.8	տարածքի դռները ապահովված են բժշկական թափոնների բեռնարկղներով ավտոտրանսպորտի միջոցով տեղափոխելու հնարավորությամբ:				2			
55.	Ժամանակավոր պահման հատուկ տարածք մուտք են գործում միայն բժշկական թափոնը հավաքելու, տեղադրելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողները:				3	Հղում 4, կետ 34	Տեսողական հարցում	
56.	Վարակիչ թափոնները ժամանակավոր պահման հատուկ տարածքում թափոնները պահվում են ձմռանը՝ 72 ժամից, իսկ ամռանը՝ 48 ժամից ոչ ավել:				3	Հղում 4, կետ 35	Փաստաթղթային, հարցում	
57.	Բժշկական թափոնների պահման ժամկետը հաշվարկվում են սկիզբն ընդունելով դրանք տարողության մեջ տեղադրելու օրը:				2	Հղում 4, կետ 36	Փաստաթղթային, հարցում	
58.	Բժշկական թափոնների գործածության Ծրագրով սահմանված ժամանակացույցի կատարման նպատակով վարում են հատուկ մատյաններ՝ բժշկական թափոնի գոյացման տեղում և ժամանակավոր պահման հատուկ տարածքում:				2	Հղում 4, կետ 37	Փաստաթղթային	
59.	Բժշկական թափոնի գոյացման վայրում վարվող մատյանում նշվում է բժշկական թափոնի տեսակը, դրա հավաքման և գոյացման տեղից հեռացման ամսաթիվը:				2	Հղում 4, կետ 37	Փաստաթղթային	
60.	Բժշկական թափոնի ժամանակավոր պահման հատուկ տարածքում վարվող մատյանում նշվում է թափոնի տեսակը, դրա ժամանակավոր պահման հատուկ տարածքում տեղադրման սկիզբը և ժամանակավոր պահման հատուկ տարածքից փոխադրելու ամսաթիվը:				2	Հղում 4, կետ 37	Փաստաթղթային	
61.	Մատյանները համարակալված և կնքված են կազմակերպության տնօրենի կողմից:				2	Հղում 4, կետ 38	Փաստաթղթային	
62.	Մատյաններում գրանցումներ կատարում են միայն բժշկական թափոնը հավաքելու, տեղադրելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողները՝ համապատասխան աշխատանքները կատարելու ընթացքում:				2	Հղում 4, կետ 38	Փաստաթղթային	
63.	Վարակիչ թափոնների վնասագերծումը վարակագերծումը իրականացվում է սահմանված կարգով: Նշում 2				2	Հղում 4, կետ 39 հավելված 2,	Տեսողական հարցում Փաստաթղթային	

64.	Վարակիչ թափոնի պատշաճ վնասագերծման արդյունքում առաջացած թափոնը հեռացվում է որպես կենցաղային թափոն:				2	Հղում 4, կետ 40	Տեսողական հարցում Փաստաթղթային	
65.	Բժշկական այլ թափոնների, բացառությամբ վարակիչ թափոնների, վնասագերծումը, իրականացվում է բժշկական թափոնների անվտանգ գործածության մեթոդական ուղեցույցում /այսուհետ մեթոդական ուղեցույց/ ընդգրկված եղանակներով: Ընտրված եղանակը ներառված է կազմակերպության բժշկական թափոնների գործածության Ակտով: Նշում 3				2	Հղում 4, կետ 41	Տեսողական հարցում Փաստաթղթային	
66.	Աղբավայր չունեցող բնակավայրերում մշակման ձևերի բացակայության դեպքում բժշկական թափոնները թաղվում են կազմակերպության տարածքում կամ մեկ այլ հատուկ հատկացված տարածքում, հատուկ պատրաստված փոսերի մեջ: Այդ փոսերը կազմակերպված են և օգտագործվում են մեթոդական ուղեցույցի համաձայն:				2	Հղում 4, կետ 45	Տեսողական	
67.	Բժշկական թափոնների գործածության մեջ ներգրավված աշխատողները դրանց հավաքման, ժամանակավոր պահման, փոխադրման, վնասագերծման և թաղման ողջ ընթացքում կրում են մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ և հատուկ արտահագուստ:				2	Հղում 4, կետ 46	Տեսողական	
68.	Բժշկական թափոնների գործածության մեջ ներգրավված աշխատողները դրանց հավաքման, ժամանակավոր պահման, փոխադրման, վնասագերծման և թաղման ողջ ընթացքում ձեռնոցները հանելուց հետո ձեռքերը լվանում են հեղուկ օճառով հոսող ջրի տակ:				2	Հղում 4, կետ 46	Տեսողական, հարցում	
69.	Աէրոզոլային, գոլորշիացման և ցայտելու հավանականություն ունեցող բժշկական թափոնների գործածությանը մասնակցող աշխատողները կրում են դիմակներ, պաշտպանիչ ակնոցներ, հատուկ անջրաթափանց արտահագուստ, կոշիկներ:				2	Հղում 4, կետ 47	Տեսողական	
70.	Վարակիչ թափոնների գործածության մեջ ներգրավված աշխատողները պատվաստվում են համաճարակային ցուցումով ընդգրկվելով նպատակային խմբում:				2	Հղում 4, կետ 48	փաստաթղթային	
71.	Բժշկական թափոնների գործածության մեջ ներգրավված անձինք թափոնների գործածության հետևանքով ստացված վնասվածքների դեպքում դրա մասին անմիջապես հայտնում են կազմակերպության տնօրինությանը:				2	Հղում 4, կետ 51	Փաստաթղթային, հարցում	

Հղում 1. ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009թ. N 03-Ն հրամանով հաստատված «Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում /բաժանմունքներում/ ներիվանդանոցային վարակի կանխարգելում և հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպում և իրականացում» N 3.1.6-011-09 սանիտարահամաճարակային կանոններ և նորմեր

Հղում 2. ՀՀ առողջապահության նախարարի 20.11.2008թ. N21-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի համաճարակաբանական հսկողություն» N 3.1.1-010-08 սանիտարահամաճարակային կանոններ և նորմեր

Հղում 3. ՀՀ առողջապահության նախարարի 16.04.09 թ. N 06-Ն «Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.13 սանիտարական կանոններ և նորմեր

Հղում 4. ՀՀ առողջապահության նախարարի 24.03.08թ. N 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոններ և նորմեր

Հղում 5. ՀՀ առողջապահության նախարարի 31.07.2012թ. N 11-Ն հրամանով հաստատված «Ախտաբանաանատոմիական բաժանմունքների, հյուսվածքաբանական լաբորատորիաների տեղակայմանը, կառուցվածքին, ներքին հարդարմանը, գույքի և սարքավորումների շահագործմանը, միկրոկլիմային, օդափոխանակությանը, ջրամատակարարմանը և ջրահեռացմանը, սանիտարահակահամաճարակային ռեժիմին ներկայացվող պահանջներ» N 2-III-3.3.1.-026-12 սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմեր

Նշում 1 Հասարակական զուգարաններում ամենօրյա սանիտարական մաքրումը և ախտահանումը կատարվում է առնվազն 2 անգամ և ըստ անհրաժեշտության՝ եթե սենքերի պատերին, հատակին և սարքավորումների մակերեսներին կան տեսանելի աղտոտվածության հետքեր կամ հատակի մակերեսին կան ջրակուտակումներ կամ խոնավություն: Սանիտարական մաքրումը կատարվում է խոնավ եղանակով: Սանիտարական մաքրումը և ախտահանումը ընդգրկում է սենքերի պատերի, հատակի, դռների բռնակների և սարքավորումների մաքրումը և ախտահանումը: Սանիտարական սարքավորումների, վաճառանների, երեխաների տակդիրների փոխման համար սեղանների, հատակի, պատերի ախտահանման (երկնվազ սրբում, ողողում ջրով) համար օգտագործվում է 1%-ոց քլորամին Բ, վաճառ-ախտահանող միջոցներ՝ 5 գ. 100սմ² մակերեսի հաշվարկով, 0.5%-անոց վաճառ նյութի և քլորամին Բ-ի խառնուրդ, կալցիումի հիպոքլորիդի (0.5%) կամ Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով թույլատրված համարժեք այլ լուծույթներ:

Նշում 2 ՀՀ առողջապահության նախարարի 2008 թ. մարտի 4-ի N 03-Ն հրամանով հաստատված Հավելված 2

ՎԱՐԱԿԻՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՆՏԱՀԱՆՄԱՆ/ՎԱՐԱԿԱԶԵՐԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԳՈԼՈՐՇԻՈՎ ՎԱՐԱԿԱԶԵՐԾՈՒՄ

1. Գոլորշիով վարակազերծման սարքերը (ավտոկլավներ) պետք է բժշկական վարակիչ թափոնի բեռը ապահովեն թափոնի բեռի կենտրոնում տեղադրված ստերոթերմոֆիլային բացիլի սպորների առնվազն 10⁴ աստիճանի (լոգարիթմ 4) սպանելը ապահովելու համար բավարար ջերմաստիճան, ճնշում և ժամանակ: Սպորները տեղադրվում են թափոնի բեռի կենտրոնում: Սարքը առաջին անգամ գործարկվում է հետևյալ կերպ.

1) մինչև սարքի գործարկումը, դրա համար անհրաժեշտ պարամետրերը, ինչպիսիք են ջերմաստիճանը, ճնշումը, վարակազերծման ժամանակը, որոշվում են հետևյալ հերթականությամբ.

2) նախապատրաստվում է վարակիչ թափոնի թեստային բեռը՝ վարակազերծման ենթակա բժշկական վարակիչ թափոնի առավելագույն քաշով և խտությամբ.

3) մշակումից առաջ, բացիլուս ստերոթերմոֆիլուսի սպորները տեղադրվում են յուրաքանչյուր սարքի ներքևում, վերևում և առջևի մասում, յուրաքանչյուր տարողության մոտավոր կենտրոնում, և բեռի վերևի և ներքևի միջև գտնվող տարածության վրա.

4) եթե թեստային բեռի վարակազերծման ընթացքում օգտագործված աշխատանքային պարամետրերը ապահովում են ստերոթերմոֆիլային բացիլի սպորների նվազագույնը 10^4 աստիճանի (լոգարիթմ 4) սպանում բոլոր տարածքներում, ապա սարքը հետագայում օգտագործվում է այդ պարամետրերի պայմաններում:

5) եթե աշխատող պարամետրերը չեն կարողանում ապահովել ստերոթերմոֆիլային բացիլի սպորների նվազագույնը 10^4 աստիճանի (լոգարիթմ 4) սպանում բեռի բոլոր հատվածներում, ապա վարակազերծման ժամանակը, ջերմաստիճանը կամ ճնշումը փոփոխվում են (բարձրացվում են) և թեստերը կրկնվում են այնքան, մինչև ստերոթերմոֆիլային բացիլի սպորների նվազագույնը 10^4 աստիճանի (լոգարիթմ 4) սպանում գրանցվի բեռի բոլոր հատվածներում: Հետագայում սարքը պետք է օգտագործվի այդ պարամետրերի պայմաններում: Եթե մշակվելիք բժշկական վարակիչ թափոնի տեսակը փոխվում է, ապա թեստերը պետք է կրկնվեն հետագա աշխատանքի նոր պարամետրերը որոշելու համար:

2. Յուրաքանչյուր սարքի համար վարակազերծման արդյունավետությունը ապահովող պայմանները գրանցվում են հատուկ մատյանում՝ նշելով առնվազն հետևյալը.

1) վարակազերծում ապահովող պարամետրերը՝ ժամանակը, ջերմաստիճանը և ճնշումը.

2) օգտագործվող տարողությունները և սարքի մեջ բեռի տեղավորման նկարագիրը:

3. Սարքը կարող է օգտագործվել միայն աշխատող պարամետրերին հասնելու դեպքում՝ օգտագործելով վերը նշված չափանիշները:

4. Սարքը պարբերաբար տեխնիկապես սպասարկվում է՝ սարքի անձնագրով և այլ տեխնիկական փաստաթղթերով նշված պահանջների համաձայն և ստուգաչափվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով: Տեխնիկական սպասարկման մասին կատարվում են համապատասխան գրառումներ, որոնք պահվում են տեղում և ներկայացվում ըստ անհրաժեշտության:

5. Եթե սարքը չունի ջերմաստիճանի և ճնշման ինքնուրույն շարունակական դիտարկելու և գրանցելու հնարավորություն՝ յուրաքանչյուր վարակազերծման ողջ տևողության ընթացքում, ապա վարակազերծման ենթակա վարակիչ թափոնի յուրաքանչյուր բեռ ունենում է ջերմաստիճանը գրանցող ժապավեն կամ հավասարազոր թեստային նյութ՝ զգայորոշիչ /քիմիական կամ կենսաբանական/: Այն տեղադրվում է ջերմամեկուսիչ նյութից պատրաստված զոնդի վրա յուրաքանչյուր բեռի ներսում՝ տարողության մեջտեղում, վարակազերծման համար նախատեսված ջերմաստիճանը և ճնշումն ապահովելը գրանցելու համար: Թափոնը չի կարող համարվել վարակազերծված, եթե զգայորոշիչը չի գրանցել պրոցեսի ընթացքում առնվազն 121°C ջերմաստիճան:

6. Յուրաքանչյուր սարքի արդյունավետությունը պետք է գնահատվի ստերոթերմոֆիլային բացիլների սպորների թեստի միջոցով՝ առնվազն ամիսը մեկ անգամ: Սպորները պետք է տեղադրվեն թափոնի բեռի կենտրոնում: Վերջնական գնահատման արդյունքները պետք է գրանցվեն: Դրանք պահվում են տեղում և ներկայացվում անհրաժեշտության դեպքում:

7. Յուրաքանչյուր սարքի համար պետք է վարվի դրա աշխատանքի գրանցման մատյան: Յուրաքանչյուր օգտագործման համար պետք է գրանցվի հետևյալը.

1) ամսաթիվը և աշխատողի անունը.

2) վարակազերծված թափոնի տեսակը և մոտավոր քանակը.

3) վարակազերծումը հաստատող արդյունքները՝ կամ գրանցելով թափոնի մշակման ջերմաստիճանը, ճնշումը և ժամանակի տևողությունը կամ գրանցելով դիտարկող ցուցիչի ցույց տված ջերմաստիճանը և ճնշումը:

2. ԹԵՍՏ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

7. Վնասազերծող սարքի տեղադրումից հետո կատարվում է վավերացնող թեստ (սկզբնական միկրոկենսաբանական թեստ)՝ վարակիչ թափոնի պատշաճ վարակազերծման ապահովումը հաստատելու նպատակով:

8. Վնասազերծող սարքի օգտագործման ընթացքում կատարվում է միկրոկենսաբանական թեստի միջոցով վարակազերծման արդյունավետության (որակի) հսկողություն՝ հետևյալ հաճախականությամբ. մեծ քանակությամբ վարակիչ թափոն արտադրող առողջապահական, գիտահետազոտական կազմակերպություններում (այսուհետ՝ կազմակերպություն)՝ շաբաթը մեկ անգամ, իսկ փոքր քանակությամբ թափոն առաջացնող կազմակերպությունում՝ ամիսը մեկ անգամ:

9. Պատշաճ վարակազերծումը հաստատելու և սարքի աշխատանքի որակի հսկողության համար օգտագործվում է առնվազն 3 թեստային նմուշ՝ վարակիչ թափոնի յուրաքանչյուր բեռի համար:

3. ՄԻԿՐՈՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՈՂՆՉԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿ

10. Ջերմաստիճանը գրանցող ժապավենի կամ հավասարազոր թեստային նյութերի՝ զգայորոշիչների բացակայության դեպքում կարող է օգտագործվել միկրոօրգանիզմների ոչնչացման աստիճանի այլընտրանքային հաշվարկ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված մեթոդական ուղեցույցի համաձայն:

Նշում 3

Բժշկական թափոնների որոշ տեսակներ կարող են տրամադրվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված այլ կազմակերպություններին՝ դրանք վերամշակելու, վնասագերծելու, պահպանելու, փոխադրելու և/կամ տեղադրելու նպատակով: Յուրաքանչյուր դեպքում տրամադրվող թափոնների տեսակները և քանակը սահմանվում են կազմակերպության բժշկական թափոնների գործածության Ակտով: Վերամշակման նպատակով բժշկական թափոններն այլ կազմակերպություններին տրամադրվում են բացառապես ձևափոխված այնպես, որպեսզի բացառվի դրանց կրկնակի օգտագործումը բժշկական նպատակներով:

Տեսուչի ստորագրություն _____

Տնտեսվարողի ստորագրություն _____